ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«3» նոյեմբերի 2026 թվականի N: 479 - Ա ք.Գյումրի

ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱԽՈՒՐՅԱՆԻ Ն.ԱՂԲԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 22-րդ մասի, 22.1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N:259-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգի» 3-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Լիլիթ Մկրտչյանի 2026 թվականի նոյեմբերի 2-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Լիլիթ Մկրտչյանին 2026 թվականի նոյեմբերի 3-ից նշանակել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Ախուրյանի Ն.Աղբալյանի անվան ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի ժամանակավոր պաշտոնակատար՝ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարցազրույցի արդյունքներով վարչատնտեսական մասի համակարգողի ընտրությունը (նշանակումը):

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է